Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Տնտեսական հետազոտությունների վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով, Նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Նախարարը՝ Նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ:

4. Վարչության կառուցվածքում ընդրգկվում են Վարչության պետը և Վարչության բաժինները:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

5. Վարչության հիմնական խնդիրն է՝ Նախարարության կողմից մշակվող զարգացման քաղաքականությունների մշակման աջակցությունը:

6. Վարչության հիմնական նպատակն է՝ գիտահետազոտական հենքով մակրոտնտեսական հետազոտությունների, վերլուծությունների և մշտադիտարկումների իրականացման միջոցով նպաստել Նախարարության կողմից համապատասխան որոշումների կայացման արդյունավետության բարձրացմանը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչության գործառույթներն են՝

1) արդիական գիտական հենքի հիման վրա մակրոտնտեսական հետազոտությունների, վերլուծությունների և մշտադիտարկումների իրականացում, տնտեսական ազդեցությունների գնահատում,

2) էկոնոմետրիկ և կառուցվածքային մոդելների կառուցում, դրանց հիման վրա համապատասխան գնահատումների իրականացում,

3) բազմավեկտոր խորքային տնտեսական հետազոտությունների և վերլուծությունների միջոցով տնտեսական զարգացման ռազմավարական ուղենիշերի նախանշում,

4) Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական իրավիճակի վերաբերյալ պարբերական տեղեկատվական–վերլուծական ամփոփագրերի և զեկույցների մշակում,

5) Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական իրավիճակը բնութագրող սոցիալ–տնտեսական ցուցանիշների տվյալների բազայի ձևավորում,

6) ըստ անհրաժեշտության ու հնարավորության՝ նպատակային հարցումների իրականացում և դրանց հիման վրա տեղեկատվության հավաքագրում,

7) տեղական և միջազգային գիտահետազոտական ինստիտուտների, հետազոտական կենտրոնների ու կազմակերպությունների հետ համագործակցության ուղղությամբ աշխատանքների իրականացում,

8) Նախարարության ստորաբաժանումների կողմից մշակվող միջազգային ռեյտինգների և ցուցիչների բարելավմանն ուղղված քաղաքականությունների մոնիթորինգի իրականացում,

9) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ՀՀ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համագործակցելով նախապատրաստում է Վարչության գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և իրավական ակտերի նախագծեր:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից.

1) Մակրոտնտեսական հետազոտությունների բաժին.

2) Ընթացիկ վերլուծությունների բաժին:

9. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

V.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Մակրոտնտեսական հետազոտությունների բաժնի հիմնական գործառույթներն են.

1) արդիական գիտական հենքի հիման վրա մակրոտնտեսական հետազոտությունների, վերլուծությունների և մշտադիտարկումների իրականացում, տնտեսական ազդեցությունների գնահատում,

2) էկոնոմետրիկ և կառուցվածքային մոդելների կառուցում, դրա հիման վրա համապատասխան գնահատումների իրականացում,

3) բազմավեկտոր խորքային տնտեսական հետազոտությունների և վերլուծությունների միջոցով տնտեսական զարգացման ռազմավարական ուղենիշերի նախանշում,

4) տեղական և միջազգային գիտահետազոտական ինստիտուտների, հետազոտական կենտրոնների և կազմակերպությունների հետ համագործակցության ուղղությամբ աշխատանքների իրականացում:

5) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ՀՀ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համագործակցելով նախապատրաստում է Վարչության գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և իրավական ակտերի նախագծեր:

11. Ընթացիկ վերլուծությունների բաժնի հիմնական գործառույթներն են.

1) Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական իրավիճակի վերաբերյալ պարբերական տեղեկատվական–վերլուծական ամփոփագրերի մշակում,

2) Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական իրավիճակը բնութագրող սոցիալ–տնտեսական ցուցանիշների տվյալների բազայի ձևավորում,

3) ըստ անհրաժեշտության և հնարավորության նպատակային հարցումների իրականացում և դրանց հիման վրա տեղեկատվության հավաքագրում,

4) մասնակցություն տեղական և միջազգային գիտահետազոտական ինստիտուտների, հետազոտական կենտրոնների և կազմակերպությունների հետ համագործակցության ուղղությամբ աշխատանքների իրականացմանը:

5) Նախարարության ստորաբաժանումների կողմից մշակվող միջազգային ռեյտինգների և ցուցիչների բարելավմանն ուղղված քաղաքականությունների մոնիթորինգի իրականացում,

6) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ՀՀ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների

հետ համագործակցելով նախապատրաստում է Վարչության գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և իրավական ակտերի նախագծեր:

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

12. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:

13. Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Նախարարին:

14. Վարչության բաժինները ղեկավարում են Բաժինների պետերը:

15. Բաժինների պետերն անմիջական ենթակա և հաշվետու են վարչության պետին:

16. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության բաժինների պետերից մեկը՝ վարչության պետի ներկայացմամբ:

17. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինողի կողմից:

18. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

19. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիրազորությունների, շփումների և նեկայացուցչության խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: